

3725-3732

017.4

7-13

017.4

Կ ԾԱՆՈՒՅԱԳԻՐ

ՆՈՐ ԳՐԱՏԱՆ

— 0000 —

ՀԻՄՆԵԱՆ, 1904 ՅՈՒՆՎԱՐ 1

ՏԷՐ-ՏԵՕՐԷՆ

ՅՈՂԱՆՆԻՍ Մ. ԻՍԿՐԵԱՆ

معارف نظارت جلیله سنک ۱۲ مایس ۳۲۰ تاریخلی
و ۳۷۴ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر.

Կ. ՊՈԼԻՍ

Խօրասանի խան Սիպքեհի

—

Տպագր. Մ. ՍՍԲԸՆԱՆ

1904

9590

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆՔ միակ կեդրոնասեղին
է Ուսումնական Խորհուրդի կրթա-
կան նոր ծրագրին համեմատ պատ-
րաստուած ամէ՛ն տեսակ մանկավար-
ժական լաւագոյն դասագրքերու :

9 7325-57

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Պատիւ ունիմ ծանուցանելու թէ՛ 1904 Յունվար
լէն սկսեալ հաստատած եմ ՆՈՐ Գրատուն մը՝ ուր

Կ Ը Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Ի

Դպրոցական ամէն տեսակ դասագրքեր , Մանկապար-
տէզի նիւթեր , ինչպէս նաև Թուղթ , գրիչ , մելան ,
տոմար , և ին . . :

Կ Ը Շ Ա Յ Ք Ա Յ Յ Ո Ւ Ի

Բոլոր հեղինակներու գործերը, Պոլիս, Տիգրիս, Ե-
րուսաղէմ , Վիեննա , Վենետիկ , Իզմիր , Բարիզ , և
ուրիշ տեղեր տպուած ամէն տեսակ Թուրքերէն , Հա-
յերէն , Ֆրանսերէն , Գերմաներէն , Անգլիերէն ու Յու-
նարէն գրքեր , հանդէսներ՝ որոնց մուտքը արգիլուած
չէ Կ. Պոլսոյ մէջ : Դիւրութիւններ կ'ընծայուի վար-
ժարաններու մատենադարաններ կազմելու , որպէս զի
ուսանող մանուկներն իրենց առօրեայ դասերէն դուրս
գրքեր ալ գտնեն կարգալու իբրև ա.բողջացուցիչ մաս
կրթութեանն :

Կ Ը Կ Ա Տ Ա Ր Ո Ւ Ի

Մեծաբանակ ու փոքրաբանակ յանձնարարութիւն-
ներ առանց սակայն փոփոխութեան — բան մը որ, տեղի
կունենայ բանի մը գրատուններու կողմէ — կը բաւէ
որ գէ՛թ մօտաւոր հաշուով՝ կանխիկ զրկուած ըլլայ
յանձնարարութեան մը արժէքը :

Կ Ը Ս Տ Ա Ն Ջ Ն Ո Ւ Ի

Տպագրական գործեր , գրքերու՝ մա՛նուանդ դա-
սագրքերու , Թերթերու , տետրակներու , այցետոմսե-
րու , հաշուեցուցակներու , հասցէներու , հարսանեաց ,

հրաւիրագիրներու , սզդերու , շրջաբերականներու , նամակագլուխներու , դպրոցական բարենիշներու , պատուանիշներու , վկայականներու , վիճակացոյցներու և այլն :

Կ Ը Տ Ր Ո Ւ Ի

Պոլսոյ ու Գաւառներու դպրոցներու համար դըպրոցական պաշտօնեաներու մասին տեղեկութիւններ որպէս զի դպրոցական մարմինները գիտակցաբար կատարեն իրենց ընտրութիւնը :

Կ Ը Տ Ր Ո Ւ Ի

Նաև ընդարձակ ու լի ու լի տեղեկութիւններ ծխախոտի գործնական մշակութեան ու անոր վաճառականութեան մասին , թէ՛ ծխախոտի նոր ու անփորձ վաճառական մը ի՞նչ միջոցներու դիմելու , ու ի՞նչ պայմաններու տակ սպրանք հաւաքելու , և թէ՛ ծխախոտին այնինչ տեսակը ի՞նչ գինով գնելու ու արտասահմանի մէջ ո՞ր քաղաքին մէջ սպառելու է և այլն :

Հետո քաղաքներէ ու արտասահմանէ հասած վերոյիշեալ ո և է յանձնարարութիւնները կը կատարուի ճշտութեամբ , մաքրութեամբ ու արագութեամբ , արդէն այս է մեր գործին նշանաբանն ու նպատակը :

Գ Լ Ն Ա Ւ Ո Ր Պ Ա Յ Մ Ա Ն

Ապառիկ չգործել

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

1. Յանձնարարութեանց արժէքը պէտք է կԱՆ-
խիկ զրկուի՝ գէթ մօտաւոր հաշուով, հակառակ պա-
րագային անպատասխանի կը մնայ :

2, Օսմ. ոսկին 110, բրմիցը 56, գաղ. ոսկին
95 ու անգղ. ոսկին 120 զրուշի հաշուով կ'անուի :

3. Յանձնարարուած գրքերուն բանակութիւնը,
տեսակը ու հեղինակին անունը որոշ գրուելու է՝ որ-
պէս զի սխալմունք չպատահի, կարելի է սակայն այս
բացատրութիւնը չտալ, ու ընտրութիւնը մեր կամքին
թողուլ, միայն նշանակելով թէ՝ ո՞ր դասարանի հա-
մար և ի՞նչ ճիւղի գիրք է պահանջուածը, ալ անկէ
վերջ մեզի կը մնայ մանկավարժական վերջին ըմբռ-
նումներու համաձայն պատրաստուած յարմարագոյն
դասագրքերէն ընտրութիւն մը ընել : Առարքման ծախ-
քը յանձնարարողին կը պատկանի :

4. Աւելի լաւ կըլլայ, եթէ յանձնարարողը իմացնէ
թէ՝ գրքերու առաքուճը ծովո՞ւ թէ ցամաքի ճամբով տե-
ղի պիտի ունենայ, որո՞ւ հասցէին, և թէ ի՞նչ կերպով,
սնտուկո՞վ, բոլիխոսթալո՞վ, թէ փոքր փոստի ծրար-
ներով : Իսկ եթէ Պոլսոյ առաքման կերպերուն վրայ
գաղափար չունի յանձնարարողը, միայն հասցէն ցոյց
տալէ վերջ՝ կրնայ մեր կարգադրութեան յանձնել, ու
վտան ըլլալ թէ ամենէն նպատաւոր պայմաններու
տակ համբու պիտի դրուի յանձնարարութիւնը :

5. Յանձնարարութիւն մը իր տեղը հասնելէ
ա՛միջապէս վերջ պէտք է լուր տալ մեզ, հաշիւներու
մասին ալ զիտողութիւններ լսելի են առաքման Թուա-
կանէն մինչև երկու ամիս :

6. Մեզի օժամ զրկել կարելի է կամ զրամա-

ծրարով կամ մեր հրամանին վճարելի փոխանակա-
 գրով և կամ ապահովագրուած նամակի ներխակելով
 փոստի փուլ : 100 հատ 1 դրուշնոց փուլը 100 դրուշնո-
 ճաշուով կ'ընդունուի, իսկ օտար (ոչ օսմանեան) փու-
 լերը հարիւրին 30 զեղջով միայն կրնանք ընդունիլ ,
 որովհետեւ մեր գործը օսմ. փոստին հետ ըլլալով
 գրեթէ օտար փուլերուն պէտքը չենք զգար :

7. Եթէ փոխարժէքը զրկուած չէ , յանձնարա-
 րութեան մը չկատարուելուն համար պատասխանատու
 չենք կրնար ըլլալ . բայց ամէն կերպով պատասխա-
 նատու ենք , և ամէն շանք ու խնամք կը պարտինք
 յանձնարարութիւնը անյապաղ և ճշդիւ կատարելու ,
 երբ փոխարժէքը կանխիկ է :

8. Հատով ուզուած գիրքերը անգեղջ են :

9. Յանձնարարութեան քանակութեան համեմատ
 զեղջ կը տրուի :

10. Վաճառուած գրքերը ետ չեն առնուիր ,
 բայց եթէ սխալմունքը մեր կողմէ տեղի ունեցած է
 այն ատեն պարտական ենք ետ առնելու , պայմանա-
 որ մարուր վիճակի մէջ վերադարձուի մեզի :

11. Յանձնարարութիւններ պարունակող նամակ-
 ներուն գիրքը ընթեռնի ու յտակ ոճով , կարճ պէտք է
 գրուի , միայն կտրուոր կէտերը պարունակելու է ,
 զգուշանալ շփոթութիւններէ յապաղումէ ու ժամանա-
 կի կորուստէ :

ՆՈՐ ԳՐԱՏԱՆ վերաբերեալ նամակ դրամ եայլն
 պէտք է զրկել մեր հասցէին :

استامبول سرکہ جی خوراسانجی خان کتبخانہ جدید

Յովհաննէս Էսկիեան Տէր-Տնօրէն ՆՈՐ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Խօրասանճի խան Սիրքէճի

Mr OHANNES ESKIAN Directeur Librairie de NOUVELLE
 Stamboul Sirkédji Khorasandji Han
 CONSTANTINOPLÉ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Բաւական երկար տարիներէ ի վեր գրավաճառութեան զաղտնիքը ուսումնասիրած ըլլալով, այսօր հիմնեցինք գրատուն մը՝ մեզի նպատակ ունենալով զաւաններէ հասած դպրոցական գրքերու յանձնարարութիւններ օրը օրին ճամբու դնելու :

Այսօր մեր մէջ մեկէ աւելի հեղինակութիւններ ունեցող գրատուններ ունինք, որոնք շարունակ ու ամէն անգամի համար իրենց բան գործ ըրած են ուզուած տեսակ մը փոխել, ու իրենց ունեցած տեսակը միայն բշելու աշխատիլ, այնպէս որ գաւառացի յանախորդներն ու դպրոցական Պատ. մարմիններն ալ շուարած են՝ եղած այս անհաճելի կարգադրութեանց առթիւ :

Գաւառէ մը ուզուած ամէն տեսակ դպրոցական գտագրքեր, որոնք սպուած են Պոլսոյ մէջ, ամէն տանն կրնայ պատրաստ գտնուիլ, կը բաւէ որ գրավաճառը կամք ունենայ յանձնարարութիւնը անխփփա կատարելու, բայց ինչպէս ըսինք, հեղինակութիւն ունեցող գրավաճառին շահը այնպէս կը պահանջէ որ ամէն անգամ իր տեսակը բշելու աշխատի, տոանց հոգ ընելու յանձնարարողին կրկին ու կրկին ստիպումները՝ որոնք եղած ըլլան յանձնարարութիւն մը անխփփա կատարելու համար : Գրավաճառը իր տրամադրելի առատ խօսքերով կը ջանայ համոզել յանախորդը, ու կըսէ. «Ձեր ուզած տեսակը կարելի չեղաւ գտնել, կը կազմուի կոր. սպառած է, անոր տեղ աւելի հարմարագոյն գտագիրք մը գրկեցինք կը յուսամ որ գոհ կը մնաք» և այլն :

Տեղեր կան՝ որոնք կը համոզուին , կարծելով թէ՛ զրավածառը իրենց դպրոցին առաջադիմութեան համար ըրած է այս հասօնի փոփոխութիւնը , զո՞ն կը մնան , ու շնորհակալութեամբ կը գործածեն՝ միեւնոյն ժամանակ երախտապարտութեան նամակ մըն ալ հասցնելով զրավածառին հասցէին : Տեղեր ալ կան որոնք չեն ընդունիր թէև զրավածառին պատճառաբանութիւնները , բայց դատապարտուած կըլլան ա՛նպատճառ գործածելու , մտածելով որ ա՛յնչափ հեռաւոր գաւառէ մը կրկին պոլիս դրկել՝ թէ՛ աւելորդ ծախքերու դուռ պիտի բանայ , և թէ ժամանակ ալ չէ մնացած անգամ մըն ալ շաքաթներով սպասցնելու դպրոցը . ասոնք ալ խի՛ստ դիտողագիր մը զրեւով կը բաւականանան : Գործին հոգիէն հասկցող դպրոցական մարմիններ ալ կան սակայն՝ որոնք սուանց ականջ կախելու կամ համոզուելու զրավածառին պատճառաբանութիւններուն , վայրկենապէս ետ կը դրկեն ու միեւնոյն ատեն կը ստիպեն որ ա՛նպատճառ իրենց ուզածը դրկուի : Ամէն պարագայի մէջ սակայն վնասւողը միշտ գաւառացի յաճախորդը կըլլայ :

Մեր մէջ զրուածառներ ալ ունինք՝ որոնք կանխիկ յանձնարարութեան մը արժէքը զանձուելէ՛ անմիջապէս վերջ , իրենց հաշուոյն ուրիշ պէտքի մը կը գործածեն , սուանց սակայն հոգ ընելու թէ՛ պարտական էին կանխիկ եղած յանձնարարութիւն մը օր առաջ փոստին յանձնելու , շաքաթներ ու ի հարկին ամիսներ վերջ միայն կը բարեհաճին ծամբու դնել յանձնարարութիւնը , ու ան ալ ոչ զօհացուցիչ կերպով , մէկ մասը փոխուած , մէկ մասը անզեղջ , ու վերջապէս ասիկա ալ կընեն քան մղ ոլլիւմծ ըլլալու համար

միայն, հոգ չէ թէ գաւառացի դպրոցական տղաքը պիտի մնասուին իրեն շահամոլութենէն, կը բաւէ որ ինք կ'օգտուի անոնց մնասուելէն :

Զմոռնամ սակայն քսելու թէ՛ պատուաւոր ու փնտռուած գրավաճառներ ալ պակաս չեն, բայց այսօր անոնց թիւը այնչափ քիչ է՝ որ անհրաժեշտ կերպով զգալի եղած է պէտքը, յանձնակատար գրատան մը հիմնուման, հասած դիմումներուն օրինաւոր սահմանին մէջ գոհացում տրուելու համար :

Ասոնք մտածելով, ինչպէս նաև Մարգարեան, Աբիկեան, Դաւթեան, Պոյանեան, Փալազաշեան, Պէրպէրեան, Սագայեան, Սարքեան էֆէնտիներու ու գրեթէ Պոլսոյ հեղինակներուն մեծագոյն մասին խորհուրդին վրայ, այսօր հիմնեցինք դպրոցական առատ դասագրքերու կեդրոն մը Պոլսոյ ու Իզմիրի բոլոր հեղինակներու գրքերէն բաղկացեալ :

Ու քանի որ մենք հեղինակութիւն չունինք, շատ բնական բան մըն է որ շահ մըն ալ չպիտի ունենանք ուղուած գրքի մը տեղ՝ տարբեր հեղինակի գիրք բնելով : Բոլոր հեղինակներուն դասագրքերը այսպէս մէկտեղ կեդրոնացնելուս պատճառը ուրիշ բան չէ ուրեմն, բայց միայն հասած յանձնարարութիւն մը վայրկեանին ճամբայ հանել, ահա այս է մեր նպատակը ու գործունէութեան ոգին :

Գաւառացի գրավաճառներուն, դպրոցական մարմիններուն ու Պատ. դասատուներուն չե'նք կրնար ըստիպել որ ա'նպատճառ մեզի դիմեն, քանի որ գէշ աղէկ գրատուն մը կը ճանչնան Պոլսոյ մէջ, ու անոր հետ արդէն գործ կ'ընեն, բայց մեր գործառնութեան վրայ ալ գաղափար մը կ'ազմել տալու ու մենք ալ

մեր կարգին օրինաւորութեան ու պատուաւորութեան սահմանին մէջ մագի չափ չ'շեղելու պատրաստակամութիւն ունենանիս կարենալ հասկցնելու համար, կարծեմ թէ կրնանք խնդրել որ պզտիկ առիթով մը գէթ մեր նոր՝ բայց իր տեսակին մէջ, միակ գործը, պատուելու բարեհաճութիւնը ունենան։ Այլ անկէ վերջ մենք զատահ ենք թէ մեզի հետ ու ե իցէ առիթով գործ ունեցող անձնաւորութիւն մը պիտի գրաւուի մեր գործառնութենէն, ու մենք Պոլսոյ մէջ անփոփոխ զբաւակաւոր պիտի ըլլանք մեր նոր յաճախորդին ։

Շատ մը զբառուններու պէս աւելորդ ու փայլուն խօսքերով չենք ուզեր շլացնել ճանրութեան աչքը . մեր գործին ընթացքը ինքնին ցոյց պիտի տայ արդէն մեր ճշդապահութիւնը ։

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆԵՐ զաւառներու Ուսումնական Խորհուրդներուն ու դպրոցական վարչութիւններուն դիւրութիւն մը ընծայելու ու միեւնոյն ժամանակ ուսուցչական օգնութեան սնտուկին օգտակար ըլլալու ջանքով մը, կազմական կանոնագրի ու առաջարկութիւնք պայմաններու համեմատ կրնոյ գրկել տնօրէն, մասնագէտ, դասախարակ ու օգնական ուսուցիչներ ։ Անհրաժեշտ է սակայն որ առաջին ամսականը ու ճամբու ծախքը գրկուած ըլլայ մեզի պաշտոնեան ճամբայ ելլալէ առաջ ։ Այս աշխատութեանց փոխարէն (նամակի ու հեռագրի համար կատարուած անհրաժեշտ ծախքերէն զատ) բան մը չենք պահանջեր, բայց ինչ որ կը պահանջենք, ընտրեալ պաշտօնէին կէս ամսականն է միայն՝ որ ան ալ նոյնութեամբ կը յանձնուի ուսուցչական օգնութեան սնտուկին ։ Այս առթիւ աւելորդ է ըսել թէ դպրոցական Պատ. Վարչ.

չուժիւններուն ու մա՛նաւանդ ուսուցիչներուն շահը կը պահանջէ որ օգտակար աչքով մը նայելու բարեհաս-
տութիւնը ունենան մեր գրաստան, բանի որ մեր կող-
մէ ալ տարբեր աչքով մը չնայուիր իրենց օգնութեան
անտուկին :

Ե Ր Կ ՈՒ Խ Օ Ս Ք

Ուսումնասիրուած օտարներու ընթացքէ մը վերջ
այսօր համոզուած եմ թէ՛ հազարաւոր գրասուններու
կարգէն իսկ կրնայ սիրուիլ ու առաջ երթալ այն գը-
րասունը՝ որ իրեն նշանաբան քրօմ է պատուաւորու-
թեամբ գործել՝ ու օգտակար ըլլալ դպրոցներուն :

Խօրատաննեան էժէնսիին հետ պայմանագիրս
դեռ չկնիւմ իսկ՝ լուսնանչոյ բարեկամներ՝ աջէն
ու ձախէն, սկսած էին արդէն իրենց գրեթէ մե-
տասնադուրսեան սակ դնելու : Առաջին անգամ
Վահրամ էժ. Մարգարեան ուրիշներէ լսելով նոր
գործիս առթիւ ունեցած մտադրութիւնս, արագապէս
իր գրասան գործակատարին միջոցաւ հասցուցած էր
40—50 ոսկիի գիրք՝ անպայման կերպով : Միւսնոյն
ժամանակ Մարգարեան էժէնսիի գործակատարը կ'ի-
մացնէ ըսելով թէ « Միհրան էժ. Արքիպեանն ալ կը
պատրաստուի մեծաթանակ գիրք դրկելու » եւ այլն :
Այն ատեն լուր կը դրկեմ վերոյիշեալ էժէնսիներուն
ինչպէս նաեւ ուրիշ հեղինակներու՝ որպէս զի բան
մը չդրկեն, ու պահ մը ատեն սպասեն, մինչեւ որ
պայմանագիրս կնիւմ, գործատեղիս օրհնել սամ, ու

պատօճուսպէս ծանուցանեմ զործս : Ձէինք կրնար առաջին օրերուն մէջ մեր զործատեղին լեցնել , մէկ երկու հեղինակներու գրեերով , քանի որ մեր փափաքն էր գրեթէ բոլոր հեղինակներու գրեերը ունենալ մեր սրամադրութեան սակ :

Նախկին կրթական շեսուշ Յովնան էժ. Փալազաւեանի հետ ալ նոյն օրերուն շեսուքիւն մը կուներնանք՝ որ սկսաւ այսպէս . «Բաւական ասենէ ի վեր մեզ շեսնել կուզէի կարեւոր զործի մը վրայ խորհրդակցութեան համար, ուրախ եմ որ այսպէս պատահմամբ կը հանդիպիմ » կրսէ Փալազաւեան էժ. : Ու մեր շեսութեան մէջ կը շարունակէ . «Ընկերակցութեամբ գրասուն մը բանալու մտադրութիւն ունենալով՝ ձեզ ալ ընկեր առնելու որոշում տուած ենք, ու զործին վարչութիւնը ձեզի պիտի յանձնուի՝ եթէ երբէք հաւանիմք », շարահակալութիւնս յայտնելով հիմնուելիք գրասան նպատակը երբ հասկնալ կուզեմ , կը պատասխանէ . «Ինչպէս դուք լաւ գիտէք , գրեթէ բոլոր հեղինակներս դժգոհ ենք քանի մը գրասուններէ որոնք ա՛նպատեառ իրենց տեսիլը փաշտափն առանց հոգ ընելու թէ՛ ուրիշ հեղինակի մը գիրք է ուզուածը , հիմակ , հիմնուելիք գրասան նպատակը պիտի բլլայ անփոփոխ կատարել յանձնարարութիւնները ու ստոր համար ալ կոչում պիտի ընենք հեղինակներուն՝ որպէս զի երեւց գրեերէն մեր սրամադրութեան սակ դնեն » , եւայլն : Այն ասէն Փալազաւեան էժ. ին հասկցնել ուզեցի թէ՛ «արդէն մեր կողմէ այդպիսի ձեռնարկ մը եղած է ամիս մը առաջ , ու շրջաբերականներս ձեռագիր պատրաստած եմ » որոնցմէ մէկ հասք միայն կարդացի , ու երբ հասկցաւ

նպասակս , շատ ուրախանալով՝ իր հեղինակութիւններէն ա՛նմիջապէս դրկելու պատրաստակամութիւն ցոյց տուաւ յայնորդ օրուան մէջ իսկ , բայց մենք ալ մեր կարգին . կրկին շնորհակալութիւն յայտնելով՝ խնդրեցինք որ բան մը չդրկէ , մինչեւ որ գործս ծանուցանող շքաբերականս չհասնի իր ձեռքը :

Վերջապէս համոզուած ըլլալով որ հեղինակներուն սիրտն ալ երած է , օր առաջ իրենց ու դպրոցներուն օգտակար ըլլալու ջանքով մը սկսանք շարժիլ ու քանի մը օր վերջ գրեթէ բոլոր հեղինակներուն հասցէին կը դրկուէր բուն ծանուցագիրը :

«Այն ամէն մեծայարգ հեղինակներ՝ որոնք կը փափաքին իրենց հեղինակութիւնները մեր տրամադրութեան տակ ունենալ , վստահ ըլլալով թէ փնտռուած տեղը պիտի հասնի օրը օրին իրենց գրեթէ՝ կը խնդրուի որ մինչեւ յառաջիկայ Յուլիս 20 մեզի հետ համաձայնած ըլլան՝ անձամբ գալով մեր գրասենեակը : Անկէ վերջ մեզի յանձնուած տեսակ մը երբ կ'ըստառուի , արագապէս լուր պիտի տրուի հեղինակին՝ որպէս զի անմիջապէս պակասին տեղը լեցնէ :

Առաջին զեկուցման մը վրայ երբ լուր կը մնայ հեղինակը , երկրորդ ու վերջին անգամ ըլլալով լուր կը դրկուի , իսկ եթէ այս անգամ անլ պատասխան չառնենք , այն ատեն կը ջնջուի նոյն տեսակը մեր վաճառած գրեթէ անունէն , ու պահանջուած ատեն ալ՝ երբ չդրկուի , պատասխանատու չենք նկատեր թղմեզ , ու հեղինակն ալ դիտողութիւն ընելու երբէ՛ք իրաւունք չկրնար ունենալ , քանի որ յանձնարարութիւն մը պակաս տեսակի մը համար շքաբերելով չենք կրնար սպասցնել : Բայց եթէ հեղինակը կարենայ

հաստատել թէ երկու անգամուան զրկուած զեկուցա-
գրերն ալ չէ ստացած՝ այն ատեն կրնայ անմիջապէս
պակասը լեցնել ու իր իրաւունքները անմիափոխ պա-
հել : Հեղինակները մեր տրամադրութեան տակ կրնան
դնել միայն իրենց հեղինակութիւններէն առ առա-
ւելն 100 տկան օրինակ , սակէ աւելի շնորհումիւր ,
քանի որ մեծաքանակ տեսակներ գտնուելով Պոլսոյ
մէջ , պէտք ունինք ամէնուն ալ՝ ու դասապարտուած
չենք , մեր գրասունը աւելորդ գրերու *արտոյթ* մը բ-
նելու : Ինչպէս քսինք՝ պակասած գրերուն անունները
հետզհետէ պիտի իմացուի հեղինակին :

Մեր մայր տարներուն մէջ իւրաքանչիւր հեղի-
նակի համար հաշիւներ պիտի բացուի , տարուան Օ-
գոստոս եւ դեկտեմբեր ամիսներուն մէջ ալ երկու ան-
գամ հաշիւ պիտի տեսնուի , ամէն հեղինակ իրաւունք
պիտի ունենայ ծախուած կամ պակասած գրերուն
արժէքը վայրկեանապէս գանձելու ,» եւայլն :

Վերջապէս մեր գործին նպաստակը այս կերպով
հասկցուցած ըլլալով՝ ուրախ ենք այսօր քսելու թէ՛
Պոլսոյ գրեթէ բոլոր հեղինակները արագապէս ու
հստոյնով պատասխանած են եղած հրաւերին , հաս-
ցունելով իրենց գրերը մեր գրասունը :

Ուրեմն մենք ալ մեր կարգին կողմնակի օգտա-
կար ըլլալու պատրաստակամութեամբ մը սկսած ենք
գործել , այն յուսով թէ սիւսլ հայլ մը չպիտի առած
ըլլանք , քանի որ ուրիշներու օգուտէն վերջ , կը յա-
սանք ունենալ մենք ալ մեր բաժինը : Եթէ սակայն
փորձ մը ըլլայ մեզ պատուելու դպրոցական Պաս-
Վարչութիւններէ ու գաւառացի գրավանատներէ :

ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒՅԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆԵՐ կարելու կը համարէ նաեւ հետեւեալ ծանօթութիւնները՝ սալ ամէն յանախորդաց ու մասնաւորապէս գաւառային վարժարաններու տեսչութեանց :

1. ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆԵՐ կը հայթայթէ նաեւ Մանկապարտէզի Ֆրոպէլեան առաս նիւթեր իրենց ամբողջութիւնով, այնպէս որ մանկապարտէզի ամէն վարչունի իր պզտիկներուն համար փնտռուած անհրաժեշտ խաղալիքները կրնայ ստանալ մեր միջոցաւ :

2. ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆԵՐ հետաքրքիր բանաստեղծներու գոհացում տալու համար հազուադէպ ու սպառած գրքերը գտնելու ջանք կրնէ ու կը դրկէ փնտռուած տեղը կը բաւէ որ արտօնուած բլլան Մէտրիժէն ու Օսմ. համակուսան հննիչ պատճօնեաներն ալ արտօնեն դրկելու :

Մէտրիժէն արտօնուած ու վերջը արգիլուած գիրք մը երբէք չեն կրնար դրկել, այսպիսի գրքերու անունները վայրկեանապէս կ'աւրուին յանձնարարութեանց ցանկէն :

3. ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆԵՐ Պոլսոյ ու գաւառներու համար պէտք եղած պարզեւաբաշխութեան վերաբերեալ գրքերն ու պիտոյի արագապէս կրնայ հայթայթել անմեղելի գեղչով, ու օրը օրին հասցնել փնտռուած տեղը :

4. ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆԵՐ իր հետ ուղղակի յարաբերութիւն ունեցող դպրոցական բոլոր պատճօնէից ինչպէս նաեւ Պատ. Հոգաբարձութեանց տարեկան

առփիւ մէյ մէկ օրացոյց կը դրկէ , ինչպէս նաեւ
աղբասիկ զոց ալ ձրի գիրք , կը բաւէ որ վերոյիշեալ
անձնաւորութեանց անունները որոշակի ցոյց տրուած
ըլլայ մեզի , նետեւեալ հարցումներուն պատասխան-
ները տրուելով :

1. Գիւղիզ Բահաններուն անունը .

2. » Հոգաբարձութեան ասենապետին անունը

3. » » ասենադպիրին անունը

4. » դասասուններուն անունները իրենց
ասիմանով :

5. Գիւղիզ բարոցին աշակերտներուն թիւը վեր-
ի վերոյ :

6. Աղբասիկ զոց ուսանողներու թիւը ու ձրի
գիրք դրկուելու ամենէ՛ն կարն համբան :

5. ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆՐ յանախորդներուն հասնելի
ըլլալու համար կորսուած ծրարներու պատասխանա-
տուութիւնն ալ կը ստանձնէ . բայց չմոռնաւք բտելու
թէ՛ գրասանս կողմէ դրկուած ծրարները կ'ապահովա-
գրուին Օսմ. փոստէն , այնպէս որ ընդունողը ոչ ա-
պահովագրեալ ծրարի մը տեղ դնելով «չհասաւ» ելլն-
չկրնար բտել :

6. ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆՐ գաւառացի յանախորդնե-
րուն կրկին օգտակար ըլլալու դիտումով ցոյց կուտայ
թղթասարական սակագիները ու ինչ ինչ կարելու
մասերը բացատրելով թէ՛ «Օսմ. Պետութեան թղթասար-
ներով մինչեւ 15 կրամ կշռող նամակներ կը փոխա-
դրուին ցամաքի համար 1 դրուով , 16էն 30 կրամ
նամակներ 2 դրուով , իսկ ծովագրեայ Բազմներու
համար կառնուի ցամաքին կէս զինքը վերագրեալ կը-
րամներու համար :

ՆԱՄԱԿԻ ՄԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նամակի մը ապահովութեան (թէահիւսլի) համար 1 դրու՛ւ ւաւելի ու 10 փարայ ալ արձանագրութեան համար կ'առնուի : Բայց կրկին ապահովութեան համար կ'առնուի 2 դրու՛ւ ու 10 փարայ ալ արձանագրութեան :

1 դրու՛ւ ըստ ապահովագրեալ նամակներուն համար նամակը քննուող անձէն ստորագրութիւն կ'առնուի Օսմ. ցրուիչներուն կողմէ . բայց այս ստորագրութիւնը կը պահուի տեղւոյն նամակասան մէջ : Իսկ երկու դրու՛ ըստ ապահովագրուած նամակներուն համար ստացողէն ստորագրութիւն կ'առնուի ու նոյն ստորագրութիւնը՝ նամակը փոստին յանձնողին կը քերուի :

Մինչեւ 75 կրամ ծանրութիւն ունեցող լրագիր, գիրք, տետրակ, աշխարհացոյց, կալուածագիր (հոկ-նէք) եւ վաճառականական տուարներ ծովային քրդ-քասարով կը փոխադրուին 10 փարայով եւ իւրաքանչիւր 75 կրամի վրայ կ'աւելնայ 10 փարայ :

Սակայն ցամաքային քրդքասարով փոխադրելի այս տեսակ իրերու համար ծանրութեան չափը իւրաքանչիւր 50 կրամի վրայ է՝ որ դարձեալ 10 փարայով կը կասարուի : Այս տեսակ իրերու ծանրութիւնը մինչեւ 2000 կրամ կրնայ ըլլալ ներքին գաւառներու համար .

ԴՐԱՄԸ ԻՆՉՊԷՍ ՕՍՄ. ՓՈՍՏԻՆ ՅԱՆՁՆԵԼՈՒ Է

Ժողովուրդին աւելի դիրութիւն մը ըլլալու համար Օսմ. նամակասունները հետեւեալ տեղերու

7325-57

վէջ գուլիփոսալով դրամներ կրնդունին աւխարհի
ամէն կողմերու , ինչպէս նաեւ Պոլսոյ համար , ու
իբր փոխադրութեան վարձք 100 դրօշ համար կ'առ-
նուի միայն 20 փարայ :

Ասաբազար , Ազհիսար , Ազգեհիր , Ալաեհիր ,
Անքաւեա , Անքալեա , Այսրն , Այնարոզ , Այվալըզ ,
Արապկիր , Ական , Աւրասհիսար , Այնքապ . Ատանա ,
Ատա , Գարթալ , Գրգաղան , Գարաաղան , Գարաձէ-
րէ , Գարամուսալ , Գասքէմուհի , Գասապա , Գալաի
Սուլթանի , Գալասար , Գալալա , Գուեսսա , Գո-
նիա , Գրեհիր , Գայսէրի , Եագա , Եանեա , Զիլսո-
վա , Զախրամալոլու , Զոնկուլսազ , Էսիրնէ , Էրսէֆ ,
Էրզիննան , Էրզում , Էրէլլի (Սեւ ծով) , Էրէլլի
(Միջերկրական) , Էսկիեհիր , Էկին , Էնգարտ , Էո-
սէմիե , Թէեհուրսաղ , Թօզար , Թիրէ , Թիրէպոլու ,
Թիմուրհիսար , Թիմուրսաղ , Թարապուսար-Շամ ,
Թարապուսար-Ղարալ , Թրապզոն , Թարսուս , Թույ-
րան , Իզմիր , Իզմիս , Իսթէչէ , Իսփիսալ , Իսթէն-
բուլ , Իբոսրա , Իննեա , Ինէպոլու , Կէմէլիկ , Կիւ-
միւճանէ , Կիւմիլիհինէ , Կիրսան , Կէլվէ , Հալէպ ,
Հասիյէ , ձիսսէ , ձիւնէկ , Մերսիչէ , Մուսանեա , Մի-
սիլլի , Մալեա , Մամուրէփուլազիզ , Մերզիճուն ,
Մերսին , Մարաւ . Մուսթաճա փաւա , Մաղնիսա ,
Մանասքք , Մէնսէն , Մուսուլ , Մուլվա , Նագիլլի .
Նէվէհիր , Շարֆոյ , Շամր-Շէրիճ , Ուզունստօփրի ,
Ուլունեա , Ուշազ , Չարալեա , Չերսէգէոյ , Չեւսէ ,
Չօլու , Պապայիսկի , Պարքրն , Պաճրա , Պանսրմա ,
Պայազիս , Պիքիս , Պրուա , Պաւսա , Պայսա , Պազ-
սաս , Պօսրում , Պուզնէ , Պօլու , Պէյրուք , Պիլէնիֆ ,
Սազըզ , Սարալֆոյ , Սէլանիկ , Սիլիվէրի , Սէվէ , Սի-
րոզ , Սիսան , Սինոպ , Սամսուն , Սապաննա , Սուր ,

Սօճիլու, Սօմա, Սիսա, Վան, Տիվրիկ, Տիմար, Տի-
սօփօզա, Տիֆլիս, Տիրիլխամեր, Տիարալէֆիր, Տէնիզ-
ի, Տրախա, Տէրսի, Տէտադան, Րասա, Րէզէ, Փը-
րէօփնա, Փէրլէզէ, Գոսնու Շէրիճ (Երուսաղէմ),
Քըզիլիսէ, Քարապիզա, Կարահիսար, Քիլիս, Քէ-
ման, Քանկրի, Քէօփրիլիս, Քէօքանեա, Քէշան,
Քէօփու, Օրսու, Յուլէ :

Օսմ. Զամակասունը նոր դրութեան մը համե-
մաս ծովեզերեայ կամ երկաթուղի ունեցող քաղաք-
ներու համար կրկնուցի հասել մինչեւ 5000 կրամ,
այսինքն 5 ֆիլօ ծանուօթիւն ունեցող գիրքերու ծը-
րարներ ու այս փոխադրութեան համար ալ կ'ըս-
տանայ միայն 4 դր. 20 փարայ :

Այս առթիւ կ'աւզուի հասկըցնել մեր նոր յանա-
խօրհներուն քէ՛ իրենց անուան դրկուելիք գիրքերու
ծրարներ երկաթուղի ունեցող կամ ծովեզերեայ քա-
ղաքի մը մէջ գտնուող անձի մը հասցեով ստանալու
հոգը պէտք է ունենան, եթէ երբէք իրենց գիւղը կամ
քաղաքը գուրկ ըլլայ վերոգրեալ առատելաթիւներէ :
Որովհետեւ այս կերպով համբուած ծրարներու ծախ-
քը աւելի քիչ ըլլալով՝ յանձնարարողն ալ բնակա-
նաբար նոյն համեմատութեամբ կրնայ օգտուիլ :

Վ Ե Ր Ջ

Հոս կը վերջացնենք առայժմ մեր խօսքը ու ան-
գամ մըն ալ կը խնդրենք դպրոցական Պատ. Վար-
չութիւններէ, դաստասուներէ ու ուսուցչուհիներէ՝
որպէս զի բարեհաճութիւնը ունենան մեր Գրասունք
դիմելու :

Յ. Մ. Է.

Խորասաննեան Խան, Սիրէէնի

1 Յունվար 1904 Կ. ՊՈԼԻՍ

